ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«14» դեկտեմբերի 2015թ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զույգաղբյուր համայնք, գ. Զույգաղբյուր 10փ.1,հեռ.093184055

N33

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝
ՊԱՐՈՆ Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Յոլակյան.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8- րդ կետի Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ, թիվ 16-Ա, 17-Ա, 18, 19-Ն և 20-Ն որոշումները:

Առդիր՝ 12 թերթ:

Հարգանքով՝ Գոռ Սուքիասյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 11314-15
«14» 12 2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զույգաղբյուր համայնք, հասցե գ. Զույգաղբյուր, 10փ.,1
Հեռախոս՝ 093184055, էլ. Փոստ՝ zuygaghbyur.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2015 թվականի թիվ16-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով, համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 22.98%-ի չափով՝ 152000 (մեկ հարյուր հիսուներկու հազար) դրամ, բարձր լեռնային հավելում՝ 8000 (ութ հազար) դրամ, ընդամենը՝ 160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զոիյգաղբյուր համայնքի ղեկավարի 2015 թվականի վարձատրության չափը սահմանելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 19-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 16-Ա որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Չեռնպահ՝(0)

1. Քնարիկ Արգարյան
2. Մխիթար Արգարյան
3. Հարութիկ Հովհաննիսյան
4. Վազգեն Ամիրյան

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

2015թ.դեկտեմբերի 12

գ. Զույգաղբյուր

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զույգաղբյուր համայնք, հասցե գ. Զույգաղբյուր, 10փ.,1
Հեռախոս՝ 093184055, էլ. Փոստ՝ zuygaghbyur.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2015 թվականի թիվ 17-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 17-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը, համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 4 (չորս) : :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուրի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2014 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 20-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 17-Ա որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

5. Քնարիկ Արզարյան
6. Մխիթար Արզարյան
7. Հարութիկ Հովհաննիսյան
8. Վազգեն Ամիրյան

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

2015թ.դեկտեմբերի 12

գ. Զույգաղբյուր

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զուլգաղբյուր համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 12 -ի թիվ 17-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի հոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի կատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Բարձրլեռնայի ն հավելում (դրամ)	Ընդամենը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ								
1	Աշխատակազմի քարտուղար	1	117000	76.97	1	117000	8000	125000
2	Գլխավոր մասնագետ-հաշվապահ	1	114000	75	1	114000	8000	122000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ								
3	Համակարգչային օպերատոր	1	75000	49.34	1	75000	8000	83000
4	Գրադարանի վարիչ	1	75000	49.34	1	75000	8000	83000

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զույգաղբյուր համայնք, հասցե գ. Զույգաղբյուր, 10փ.,1
Հեռախոս՝ 093184055, էլ. Փոստ՝ zuygaghbyur.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<12>> դեկտեմբերի 2015 թվականի N 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով՝

Համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

9. Քնարիկ Աբգարյան
10. Մխիթար Աբգարյան
11. Հարութիկ Հովհաննիսյան
12. Վազգեն Ամիրյան

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

2015թ.դեկտեմբերի 12

գ. Զույգաղբյուր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ջուլգաղբյուր
համայնքի ավագանու2015 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 18 որոշման

ՁՈՒՅԳԱՂԲՅՈՒՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/հ	Գույքի անվանումը	Գինը/դրամ/	Քանակը	Գումարը/դրամ/	Ծանոթություն
1	Գրապահարան	3700	1	3700	
2	Գրասեղան	2500	2	5000	
3	Համակարգիչ	447000	1	447000	
4	Սեղան	15000	3	45000	
5	Աթոռ	3610	4	14440	
6	Գրասեղան	40000	1	40000	
7	Կնիք/շտամպ	39200	1	39200	
8	Գրադարանի գրքեր		6125		
9	Ջիրկիզվող պահարան	1400	1	1400	
10	Կերախոհանոց	11009000	1	11009000	
11	Սելավատար	499900	1	499900	
12	Համակարգչի սեղան	35000	1	35000	
13	Ջրագիծ	12188700	5կմ	12188700	
14	Ճանապարհ	13265300	5կմ	13265300	
15	Համայնքային կենտրոն/կուլտ.շ./	12976000	1	12976000	
16	Բնակելի շենք/3սենյ./	1506500	2	3013000	
17	Բնակելի շենք/2սենյ./	869000	2	1738000	
18	Համակարգչի կոմպլեկտ	280000	1	280000	
19	Գրասենյակային բազկաթոռ	10000	2	20000	
20	Գրասենյակային բազկաթոռ	30368	1	30368	
21	Համայնքային զբոսայգի		1		
22	Գերեզմզնոցի ցանկապատ		1		
23	Ընդամենը			55651008	
24					

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զույգաղբյուր համայնք, հասցե գ. Զույգաղբյուր, 10փ.,1
Հեռախոս՝ 093184055, էլ. Փոստ՝ zuygaghbyur.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<12>> դեկտեմբերի 2015 թվականի թիվ 19-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 19-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով՝

Համայնքի ավագանին որոշում է

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 19-Ն որոշումը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

13. Քնարիկ Աբգարյան
14. Մխիթար Աբգարյան
15. Հարութիկ Հովհաննիսյան
16. Վազգեն Ամիրյան

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

2015թ.դեկտեմբերի 12

գ. Զույգաղբյուր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ջույգաղբյուր համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 19-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՋՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինն հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինն հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինն հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր

շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մեկ հազար հինգ հարյուր դրամ:
4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տաս հազար դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ տաս հազար դրամ:
5. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
2). Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ.
3). Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տասը հազար դրամ:
4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հարյուր դրամ.
6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝
1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ հարյուր դրամ .
2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար դրամ .
3) մեկ շաբաթվա համար՝ երկու հազար դրամ .
4) մեկ ամսվա համար՝ տաս հազար դրամ .
5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար դրամ :
7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:
8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.
3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:
9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:
11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է ութսուն հազար դրամ:
12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երկու հազար դրամ:
13. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ զերո դրամ,
14. . Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ,
2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն ՀՀ դրամ,
3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն ՀՀ դրամ,
4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն ՀՀ դրամ,

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևավորման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար
3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ երկու հազար դրամ:
4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝
ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր դրամ,
2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝
ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար դրամ:

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Զույգաղբյուր համայնք, հասցե գ. Զույգաղբյուր, 10փ.,1
Հեռախոս՝ 093184055, էլ. Փոստ՝ zuygaghbyur.shirak@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«12» դեկտեմբերի 2015 թվականի թիվ 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջեթային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Զույգաղբյուր համայնքի 2016 թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ (4) Դեմ՝ (0) Ձեռնպահ՝(0)

17. Քնարիկ Աբգարյան
18. Մխիթար Աբգարյան
19. Հարութիկ Հովհաննիսյան
20. Վազգեն Ամիրյան

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան

2015թ.դեկտեմբերի 12

գ. Զույգաղբյուր

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ջուլգաղբյուր համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 20-Ն որոշման

Եկամտային մաս	Չափի միավորը՝ հազար դրամ
Ընդամենը Եկամուտներ	13474.0
Հողի հարկ	1739.0
Գույքահարկ	552.9
Տեղական տուրք	80.0
Դոտացիա	9501.9
Վարձակալական հողի վարձավճար	1400.0
Այլ ոչ հարկային եկամուտ	200.2

Ծախսային մաս ըստ գործառնական դասակարգման	Չափի միավորը՝ հազար դրամ
Ընդամենը ծախսեր	13474.0
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	8660.0
Տնտեսական հարաբերություն	300.0
Բնակարային շինար. և կոմունալ	450.0
Հանգիստ, մշակույթ և կրոն	1786.0
Կրթություն	1000.0
Սոցիալական պաշտպանություն	600.0
Պահուստային ֆոնդ	678.0

Ծախսային մաս ըստ տնտեսագիտական դասակարգման

Ընդամենը ծախսեր	հոդվածը	13474.0
Աշխատավարձի վարձատվություն	4111	7500.0
պարգևատրում	4112	600.0
Էներգետիկ ծառայություն	4212	470.0
Կոմունալ ծառայություն	4213	50.0
Կապի ծառայություն	4214	105.0
Ներքին գործուղում	4221	100.0
Համակարգչային ծառայություն	4232	35.0
տեղեկատվական ծառայություն	4234	50.0
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	4251	1090.0
Գրասենյակային նյութեր	4261	100.0
Տրանսպորտային նյութեր	4264	300.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	790.0
Այլ նպաստ բյուջեից	4729	1600.0
Նվիրատվ.շահույթ չհետապնդող կազմ.	4819	6.0
Պահուստային միջոց	4891	678.0

Համայնքի ղեկավար՝ Գոռ Սուքիասյան